



Շ Ա Բ Ա Յ Ի Թ Ե Լ Թ

Ազգային, Քաղաքական, Բանասիրական եւ Զուարճայիվ



Ժ.Պ Տարի, Թիւ 14

Շ Ա Բ Ա Յ

11 Հոկտեմբեր, 1897

ՊԱՅՄԱՆՆԵՐ. — Ծաղիկի բաժանորդագիրն է Տարեկան Պուստայ համար 40, Քառասներու համար 50 դրոս: Ահեցամեայ Պուստայ համար 25, Քառասաց համար 30 դրոս: **Հասր 30 փարսյ:** Բաժանորդագրութիւնը քիւի վրայ է. տարեկան բաժանորդներ պիտի ստանան 52 եւ վեցամեայները 26 քիւ Ծաղիկի: Պապստեան Իրասունը յանձն կ'առնէ հասուցանել բաժանորդներուն վնասները.

եթէ Ծաղիկի հրատարակութիւնը ո'ր եւ է արգելի հանդիպի Ծաղիկի բաժանորդներն իրաւունք ունին 100 այցելաւոր նուրբ ստանալու:
Հանրօրոյս նիւթերու վերաբերեալ յօդուածներ եւ քրտակցութիւններ ճեմարկայութեամբ կ'ընդունուին:
ՀԱՍՅԷ. — Ծաղիկի վերաբերեալ ամէն ինչ պէտք է ուղղել Պապստեան Իրասունը, կ. Պոլիս, Սուլթան Համամ, քիւ 14:

ԶՈՒՐԸ ԻՆԿԱՒ ԸՍԵՆՔ

Ուսուցչաց հանգստեան թոշակի խնդիրը վերջերս հայ լրագրի մը մէջ արժարժուեցաւ մասնաւոր յօդուածով մը, որու յաջորդեց Գաթիկեան էֆէնտի մէջ նամակը, յորում պատրաստականութիւն կը ցուցնէր մասնակցելու այն նախնական գործին եւ արդէն սկզբնաւորութիւն մը կընէր տեղւոյս զբաղմանց միտքն մէջ փոքրիկ գումար մը զեանդելով: Անկէ ի վեր բան մը իմացած չունինք:

Երբ վարչական մարմիններ իրենց օգնութեան կը կանչեն օժանդակ մասնակցութեան, եւ որ նոր մասնախումբ նոր մը կը կազմուի (գլխաւորներուն ընդ թեւեղեցնելու համար), ապին՝ Ուսուցիչք իրենց ծերութեան օրերուն մէջ կեանքի պայքարները թեթեւեղութեամբ նախազգուշութեամբ չեն ունենար:

Ուրիշ կապանն որ հանգստեան թոշակը գայ. Պատրիարքարանէն, Թաղ. Խորհուրդներէն թէ Հոգաբարձութիւններէն: Ասոնցմէ եւ ոչ մէկէն իրաւունք ունին այդ նպաստը պահանջելու կամ անհեղափոխելու, երբ վերջին երկուքը սարգէն կը վճարեն (ուչ կամ կանուխ) ուսուցչաց աշխատութեան վարձքը (քիչ կամ չատ):

Օրեր, ամիսներ, տարիներ կանցնին եւ կիմանանք որ բարեհամբաւ, արդիւնաշատ եւ երկար տարիներէ ի վեր կրթական գործին ուսուցիչ մը պարտքի տակ, անօթի, պառնեման, զիւղի մը անկիւնը խլիւղած խրճիթի մը մէջ իւր վերջին ճգնաժամերը կանցունէ: Ոչ ոք օգնութեան կը փութայ իրեն: Եւ իւր վերջին վայրկեանին ստակալի անէծքներ կը ժայթքեցնէ գպրոցներուն դէմ: Թերեւս այդ անէծքներն են որոց կը պարտինք մեր զբոսըցիներու արգի անկեղ եւ յետպէս վիճակը, ո՞վ գիտէ:

Ասոնք զիմանալով հանդերձ Ուսուցիչք չեն ուզէր միանալու ձեռնարկել փոխադարձ օգնութեան սուրբ եւ նախնական գործին, ուրիշ միայն պէտք է որ սպասեն

եւ յաւաննեղ կամ ծերութեան օրերու մէջ՝ զոնէ օրական հացը. թողունք կեանքի ուրիշ պէտքերը:

Կիմանանք սակայն որ, Ուսուցչաց հանգստեան թոշակի Մատուկի մը հաստատման դէմ հակառակ խօսողներ կան եղեր, որոնք Ուսուցչական ասպարէզի մէջ ժողովի գումարներ շահելու գիրքի մէջ են: Բայց մենք շատ տեսանք անանկ կրթիկ գումարներ շահողներ որք այսօր շատ գոճ պիտի ըլլային եթէ քաղաքները գտնէին:

Ուրիշն՝ բարոյական մեծ քայլ մը առնուած պիտի ըլլայ եթէ Ուսուցիչք իրենց զլխուն ճարը իրենց ձեռքով տեսնելու համար անմիջապէս ձեռնարկէին յիշեալ Մատուկը հաստատելու գայն պարտելով հետզհետէ ամսական վճարմունքներով որոց վստահ եմ որ պիտի գան միանալ կրթատէր անձանց լուսաններն եւս:

Ուրիշ ստիճակ պիտի խօսինք սոյն խնդրոյս գործնական եւ հաշուական մասերուն վրայ:

ՅՈՒՂԱՐԿԱԻՈՐՈՒԹԻՒՆ ՏՕԻԹ. ՍԵՐՎԻՉԷՆ ԷՖԷՆՏԻ

Անցեալ չարսթ օր ժամը ճիշդ 4 1/2ին կազմուեցաւ յուղարկաւորական թափօրն, որուն առջեւէն կ'երթային թաղապետական եւ հանրօգուտ շինութեանց պաշտօնատան բարասարնք, յետոյ Ս. Յակոբայ Մանկանոցէն 20ի չափ աշակերտք, երգեցիկ դպրոցներ եւ բազմաթիւ վարդապետներ ու քահանաներ: Կ'նախագահէին Մարտոսեանց Տ. Միլիթիսեղեկ, եւ Իմաքոսեան Տ. Հմայեակ եւ պիսկոպոսները: Ապա կուգար զպապն, որուն առջեւէն թաղեայ բարձի մը վրայ կ'ատարուէին հանգուցելոյն պատուանշանները, Գաղաղին ծովերը ու կերտները բռնած էին սղբային եւ օտարազգի երեւելի անձնաւորութիւնք,

հայ եւ օտարազգի երեւելեաց ընտրեալ բազմութիւն մը որք եկած էին վերջին յարգանքն մատուցանել հանդուցելոյն : Ազգ. Վարչութիւնն եւ Ուսում. Խորհուրդը գրեթէ ամբողջովին ներկայ էին : Իբրեւ սգակիր գագաղին կը հետեւէին հանդուցելոյն զաւակը Գարրիէլ Սերվիչէն էֆ. եւ փեսայն Տքդ. Խորասանճեան էֆէնտի : Թափօրը Ս. Նորորդութեան եկեղեցին համակրով, Ս. Պատրիարքը տաճարին զոնէն դիմաւորեց զայն : Եկեղեցին պարագային պատշաճ տխուր շքեղութեամբ մը լուսազարդուած էր : Հոգեհանգստեան արարողութեանց աւարտումէն յետոյ, Ս. Պատրիարքը խօսեցաւ արտայայտ զամբանական մը, որուն մէջ ողբացեալ Տքդ. Սերվիչէն էֆ. ի կեանքը պատմեց իր ընդհ. գծերուն մէջ, յիշեց անոր համեստ մանկութիւնն, եւ յամառ աշխատութիւնը լեզուաց եւ դիտութեանց մէջ յառաջանալու համար : Ն. Սրբազնութիւն Սերվիչէն էֆ. ն ներկայացուց իբր բժիշկ, իբր ազգ. գործիչ եւ իբր բարեպաշտ քրիստոնեայ. յիշեց առ Աղբն մատուցած ծառայութիւններն, իր անդամակցութիւնն ազգ. Ժողովոց մէջ, իր մասնակցութիւնն ազգ. օրինագրքին խմբագրութեան մէջ, որուն հիմնադիրներէն մին եղաւ, իր ատենապետութիւնն ազգ. Վարչութեան, եւ վերջապէս ազգ. ամէն գործերու հետ ունեցած սերտ կապակցութիւնն, որոց շնորհիւ ազգին առաջին եւ ամենաբարձր անձնաւորութիւններէ մին եղած է : Յիշեց իւր հաւատարմութիւնն առ Օսմ. Տէրութիւնն, որով հաւատարապէս օգտակար եղած է Տէրութեան եւ Աղբին :

Դամբանականէն ետք, որ մեծ տպաւորութիւն թողուց յուղարկաւորաց վրայ, Ս. Պատրիարքն Հոգւոցն ըսելով, զբազալը զրուեցաւ մեռելակիր կառքն եւ Շիշլիի ազգ. գերեզմանատունն առաջնորդուելով, իրեն յատուկ դամբարանին մէջ ամփոփուեցաւ : Մեռելակիր կառքին կ'հետեւէին յուղարկաւորաց բազմաթիւ կառքեր : Գերեզմանատան մէջ, կրօնական արարողութեանց աւարտումէն ետք, Գարրիէլ էֆ. Նորասունկեան, երկու խօսք ուղղեց իբր հրամեշտի վերջին ողջոյն ի յիշատակ հանդուցելոյն. ինչպէս եւ Տքդ. Թորգոմեան էֆէնտի յուղեալ խօսքերով հուսկ ողջոյն մը արտասանեց գերեզմանին վրայ :

ՄԱՆՐ ՄՈՒՆՐ

Աշխարհիս վրայ իւրաքանչիւր տարի ծախուած աւմին տեսակ լրագիրներու ծանրութիւնը կը հասնի 750,000 թօնոյի. եւ կամ 750,000,000 փիւջի :

Կըսուի թէ աշխարհիս 1,500,000,000 (մօտաւորապէս) բնակչաց մէջ կան 2173 հոգի որոնք 6 մաս ունին մէկ ձեռքի վրայ, եւ 431 հոգի մէկ ձեռք : վրայ 7 մասով : Ասոնք տեսնուած եւ ճանչցուածնեք : Ին միայն :

Լօտոսի եւ չրջակայից մէջ բանող թրամվէյները

եւ հանրակառքերը (օմնիպլուս) տարին 453,000,000 ճամբորդ կը փոխադրեն :

* * *

Այն ճարտնցի սպաները որ Չինացոց ղէմ կառուած էին ինչորած են իրենց կառավարութիւնէն որ արածուութիւն տրուի՝ պատերազմի դաշար մեռնող ձիերուն յիշատակին արձան մը կանգնելու Թօքիոյի մէջ :

* * *

Ռուս ազնուական տիկիներէ ոմանք իրենց հիացման առարկայ եղող Տր. Նանդէնի (բեւեռային երկրախոյզը) աննամոն նուէր մը կը պատրաստեն :

Այդ նուէրը գորդ մ'է սրու վրայ մետաքսեայ թելերով բանուած է հիւսիւսային բեւեռի քարտէսը : Այն տեղերը՝ ուր անվտիս երկրախոյզը ոտք կոխած կամ գտած է՝ ոսկիէ եւ արծաթէ թելերով բանուած են :

* * *

Ամերիկացի միլիոնատէր Օկտրն Կէօլէթի մահուամբը իւր տղան (20 տարեկան) կըլլայ աշխարհիս մէջ էն հարուստ պատանին 10,000,000 ոսկուց հարստութեամբ :

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԽՐԱՏՆԵՐ

Եթէ մարդիկ առանց կրօնի գաստիարակութիւն, խելացի սասանաներ կը դառնան :

* * *

Թէ որ կերակուրի համար աշխատել չուզես, դեղի համար պիտի աշխատես :

* * *

Ան որ բարիք մը կ'ընդունի բնաւ մոռնալու չէ, եւ ան որ բարիք մը կ'ընէ բնաւ յիշելու չէ :

* * *

Կեղծ բարեկամ մը մարդուս ստուերին կը նմանի, երբ արեւուն մէջ քալէ միշտ հետը կ'երթայ, բայց երբ շուքը մանէ անմիջապէս կը փախչի :

* * *

Օղիին գաւաթը մարդուս ամենամեծ թշնամին է, իսկ հայելին կնիան :

* * *

Ճշմարիտ բարեկամի մը դիտողութիւնը մեծ արժէք ունի, քան քաղցրալեզու շողքորթի մը գովեստը :

* * *

Եթէ մարդուս ոտքը սահի՝ կրնայ դարմանուիլ, իսկ լեզուին սահիլի՝ գրեթէ անդարմանելի է :

* * *


Մարդիկ ինքզինքնին տպադրութեան մէջ տեսնել կը սիրեն իսկ կանայք մետաքսի եւ թաւիչի մէջ :

* * *

Քնացող աղուէքը որսալու ժամանակ չուենար :

* * *

Եթէ ձեռքիդ գաւազանը ծուռ է, ստուերն ուղիղ չի կրնար ըլլալ :



ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱԳՆԱՊԸ

Ն Ե Ր Կ Ա Յ Վ Ի Ճ Ա Կ Ն Ի Ս

Ինչպէս ծովին ջուրը եղանակին համեմատ երբեմն կը բարձրանայ ու երբեմն ալ կը քաշուի, ճիշդ այնպէս ալ այս մէկ քանի սարուան մէջ ստակները ընդհանուր աչխարքէն քաշուեցան, այնպէս որ չորս կողմերնիս ցամաքացաւ։ Ուր որ երթաս կամ ով որ տեսնաս լսածդ ուրիշ բան չէ, ստակ չիկայ, բարս չիկայ։ Անդին կերթաս՝ բարեկամներէդ մէկը կը տեսնես որ կըսէ, անձրեւները սկսան շէմշիւէ մը առնելու է, բարս չիկայ։

Անդին դառնաս՝ մէկը պոռալով, ե՛ղբայր, ինչպէս այս ձմեռը պիտի անցընեմ, բալթօս էսկիճիցին ծախեցի հիմա օրթանս եմ մնացեր, սանկ պայազլի բան մը առնեմ ըսի, փարս չիկայ։

Տուն կերթաս կնիկդ կը պոռայ երեսիդ, աս տարի «չօճուխները» փատնան պիտի, տամլամը քէօմիւր չիկայ։ Ի՞նչով եփեմ կերակուրը, քէօմիւր պիտի առնեմ փարս չիկայ էն զատ ուրիշ բան մը չես լսեր։ Ամենէն հարուստն անգամ, այն աստիճան կ'ւրայ, այն աստիճան յուսահատ հառաչանքներ կ'արձակէ, որ ճշմարիտ չունեցողէն աւելի մարդուս խղճին կը դպի, խել մ'ալ մխիթարական խօսքեր ըսելով կ'առնես կը քարես։

Բայց, գիտես, գէշը ո՛ւր է, երբ ճամբան բարեկամի ծանօթի մը հանդիպեցար՝ զքեզ չտեսնելու կը զարնէ, որպէս զի չելլես իրմէ՛ առնելիքդ պահանջես կամ տուածիդ պէս՝ փոխ ստակ ուզես։

— Գոնէ այդ ունեցողները ինչո՞ւ իրենց պարտքը չեն ճանչնար ու չունեցողները միշտ նեղը կը խոթին՝ երբ առնելիքնին իրաւամբ պահանջելու կերթան, կամ ինչո՞ւ եթէ չպիտի վճարեն այսօր՝ այսօր, վաղը ըսելով պարտապահանջնին կը խարին ու քթին կը խնդան։

— Բայց այս մարդիկն ալ իրենց հարստութիւնը այսպիսի խաբես խուրհուրով ժողովր են, թէ որ ամէն ատուրին տալու ըլլան իրենք ալ ատուրի ենթակայ պիտի ըլլան, քանզի չկայ մէկը որ տուր ըսէ, չկայ մէկը որ պարտական չըլլայ, սակայն տուր ըսելով առնելուն կերպը գիտնալու է մարդ իրեն պարտք ունեցողին ստակը պահանջելու կերպը գիտնալու է եւ թէ տալիքի ատեն ի՞նչ կերպով վարուելուն արհեստը սովորած ըլլալու է։

— Կ'աղաչեմ բարեկամ սա կերպերը դուն սորվեցոր նայինք ի՞նչ կերպով վարուելու է եւ ստակ բրցունելու կերպը գիտնալու է։ Որովհետեւ պարտքս մինչեւ վրձս հասաւ, եւ ալ սուտ խոստումներ ընելով օձիքս ձեռք տուի։

- Անանկ է նէ, ախմձ տուր որ ըսեմ։
- Ըսէ նայիմ։
- Ըսենք որ հիմա, սա վայրկեանիս ելաւ պարտապահանջիդ մէկը եկաւ՝ որ քենէ ստակ կուզէ։
- Կուզէ ես։
- Նստեցաւ։
- Բէք ազէկ։
- Անմիջապէս սիկար մը փաթակով խահուէ մը

ապագրէ ու հրամցուր, հրամցունելէդ ետքը ամենայն քաղաքավարութեամբ կենցաղավարութիւնը հարցուր։

— Սիկարան խահուէն հրամցուցինք ըսինք, ետքը ի՞նչպէս գլխէ տէ՛ք ընելու է, ինձի ան ըսէ։

— Կեղիք համբերէ որ ըսեմ անիկայ իւր առնելիքին խօսքը չի բացած՝ դուն խօսք բանալով ըսէ, Աման է-Ֆէնտիւմ, ձեր քովն ալ ամօթով մնացի, ներիցէք, ճշմարիտ որ ինձի ինչ յանդիմանութիւն ալ ընէք՝ իրաւունք ունիք, պէտք չէր որ ձեր ազնուութիւնը մինչեւ հոս յողնեցնէի, ինձի կը վայլէր ձեր ոտքը զալ եւայլն եւայլն։ Այն ալ անմիջապէս անքաղաքավարութիւն մը չընելու համար, քա՛ւ լիցի, ասանկ խօսքեր չեմ ուզեր որ ընէք, պիտի ըսէ, դուն զարձեալ վինչ ըսել է, իրաւունք ունիք զիս յանդիմանելու, եւ մինչեւ իսկ ծանր խօսքեր ալ ընելու» ան ալ՝

— Ձի վայլեր, պիտի ըսէ. դուն նորէն «Ձեր աղ-նուութիւնն է, ես իմ յանցանքս կը ճանչնամ» ըսէ, բայց ստակը որ օր տալուդ վրայ՝ ամենեւին խօսք մի տար։ Ասոր վրայ՝ անպատճառ՝ շնորհակալ եմ, ուրիշ ատեն թող ըլլայ՝ ըսելով պիտի ելլէ երթայ։

— Ատենք աղէկ ամմա, ամէն առնելիքի տէր այս տօլմաները չի կըլլէր նէ, նայինք անոր ի՞նչ պիտի ըսես։

— Ես ալ քեզի ամենուն համար այս ընթացքը բոնէ չեմ ըսեր կորա՛ այս ճամբան խօսք հասկցողներուն ճամբան է, չհասկցողներունը զատ է։

— Ի՛չթէ ես ալ ադ կուզեմ իմանալ, ստիկայ ըսէ։

— Այսօր ամէնը մէկէն չի կրնար ըլլալ, ատիկայ ալ ուրիշ անգամ կըսեմ։

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՇՈՂՈՔՈՐԹՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ե. էֆէնտի մեր լրագրէն մի օրինակ նուիրեց... քաղաքի վարժարանին։ Ե. էֆէնտի ընթերցասիրութիւնը արժարձելու աս փափաղը մեծ գոհութեան արժանի է ուստի մեր արեւնախորին շնորհակալութիւնը իրեն կը մատուցանենք եւ կը յուսանք որ ուրիշներ ալ իւր բարի օրինակին պիտի հետեւի։ Ե. էֆ. մեծ, շատ մեծ խիստ մեծ, ամենամեծ գովութեան արժանի է։

(Իննայեք օր)

— Պ... էֆէնտի Օրիորդ Ս... ի հարսանեաց հանդէսը կատարուեցաւ կիրակի իրիկուն, հանդէս մը որուն նմանը ոչ տեսնուած է եւ ոչ պիտի տեսնուի Պօլսոյ մէջ... (Մանրուկ չիկայ)

— Միայն թեզկեհասար Կիրակոս (եֆեհեհե) դպրոցին 5 1/2 դրուշ շնորհեց. խմբագրութիւնս իւր շնորհակալութիւնը կը յայտնէ իրեն եւ հրաւէր կը կարդայ ազգայնոց որ Կիրակոս (եֆեհեհե), օրինակին հետեւին Երանի կըլլար անոնց որ եթէ ասանկ նուիրասու բարերարներ պահաս չըլլային մեր մէջ։

(Վիրեհեհե սաղ օջտուն վիրեհեհեհեհե)

— Գերապատեւ եպիսկոպոսը իւր վիճակին առաջնորդ ընտրուած ըլլալով այս շաբթու Պօլսէն պիտի մեկնի՝ գերապատեւ Ս. Հօր իւր ազգին մատուցած ծառա-

յութիւնները յոյս կուտան մեզ, որ դպրոցներն ու եկեղեցիքն մեծ պայծառութիւն պիտի ստանան. նոյն գերապաւիւ սրբազնութեան անդու ջանից չնորհիւ :

(Աստուած սայ)

Մեծապատիւ Ք... էֆէնտի երէկ իւր մանկանացուն կնքեց ի խոր սուգ համակերով իւր պարազաները, հանգուցելոյն մարմինը (մեծ) եւ փառաւոր հանդէսով իրեն համար յատկացեալ գերեզմանը ամփոփուեցաւ :

Ք. էֆէնտի իւր (ստաֆիլի) վարքով մատուցած (մեծամեծ) ծառայութիւններովը (մեծ) անուն (սասցած) էր : ուստի զաւ է ազգին որ իր (ստեկեկե կշանաւոր) անհատը այսպէս տարածամ կորսնցուց :

(Բարի եկար)

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԳԻՇԵՐ ՍԸ Ի ՄԷՕՉԻՒՐՏԱՐ

Վերջապէս... : Սմառուան սկիզբէն ի վեր խեղճ Գատրգիւղացոյս համար անանկալ մը այո, Մնակեանի խուճը ներկայացում մը պիտի տար : Չենք զիտեր սակաւն թէ որուն բաղդէն էր, բայց կարծեմ այդ գիշերուան անանկալը աւելի կը պարտինք ցրուիչ Սաչիկի կամարան անձուկ վիճակին քան թէ մէկու մը բաղդին :

«Մնակեանը սատանային ոտքը կտորեց» ըսաւ ելաւ եւ ես ալ իմ կողմանէս աւելցուցի «Սաչիկն ալ փարային ոտքը կտորեց» հէլալ ըլլայ :

Ժամը 2¹/₂ին պիտի սկսի ըսուած էր ազգարարութեան մէջ մենք, (կամ ես) զիտենք որ 3 էն առաջ չըսկըսիր, ասոր համար չաճապարեցի, եւ այս ծուլութեանս պատիժն ալ կրեցի ժամը 2¹/₂ին երթալով եւ հազիւ առաջին կարգին վերջի կարգը տեղ մը գտայ :

Ժամը 2¹/₂էր եւ թատրոնը լեցուած էր արդէն, բայց վարձպոյրը դեռ չէր բացուեր : Ասիկայ մեր թատերական խումբերուն մէկ բարի սկզբունքն է, հող չէ որ որոշեալ ժամանակէն առաջ թատրոնը կը լեցուի, իրենք անպատճառ քառորդ մը կամ կէս ժամ վերջը պիտի սկսին, ինչո՞ւ համար, բէ՛հ, որ ինչուին՝ բանաւոր «վասն զի» եով մը պատասխանուած է :

Դերակատարներուն վրայ խօսիլ աւելորդ է, զիրենք չճանչցող չկայ : Բայց ընտրած խաղերնին, օ՛ֆ, առ քիչ մը տաղակալի էր : Եթէ «Մատամ լա Բօնիէր» չխնթենար իւր ծննդաբնութեան ատեն այդ ներկայացման եւ կամ թատերգութեան ալ պէտք չէր մնար : Կը հասկնաք ուրեմն որ կնոջ մը անանկալ յիմարանալովը 5 երկար արարուածներով թատերախաղ մը չինուեր է : Եթէ ատանկ իման մը վրայ 5 արարուածներով թատերախաղ մը կը ներկայացուի, կը հաւատում որ մեր մէջ հատը 25 արարուածներով նմանօրինակ թատերգութիւններ չինելը շատ զիւրին բան մը պիտի ըլլար :

Ինչ որ է, անցնինք : Բայց անցողակի ալ խորհուրդ կուտանք Մնակեան էֆէնտի որ եթէ ձմեռանային թատերական շրջանը սկսելուն, բարեհաճի երկրորդ անգամ ներկայանալ Գատրգիւղացոյս, եւ այս անգամ ալ ուրիշի մը ելմտական անձուկ վիճակը բարեբեղու, իւր «ոէրէնթուստին» մէջէն էն ազնոր կտորը զատէ : Գատր-

գիւղցին յօժարակամ կը վճարէ թատրոնի համար, բայց երբէք եկեղեցոյ պնակի փոխարէն (ասոր ալ պատճառը կայ որու վրայ ուրիշ առթիւ պիտի խօսիմ) :

Սյուս հանդերձ չյուսացի այդ գիշերը այնքան հոծ բաղմուտիւն մը տեսնել : Բայց այդ Սաչիկը, օ՛հ, ինչ մտնիսական զօրութիւն մ'ունի եղեր, վասն զի, հաւատացէք որ աւելի իրեն նպաստ մը քան թէ Մնակեանի եւ իւրայնոց արուեստին յարգանք մը ընելու համար եկած էր այդ բաղմուտիւնը : Խեղճ Մնակեան, ուրիշ ճարչմար քեզ համար բայց եթէ փնտոել ժողովրդական անկուտիներ :

Բաղմուտիւնը հոծ էր ըսի, բայց աղէկ որ թատրոնը ամառնային էր, եւ թէեւ տաք, բայց «բառֆիւմբոբի» խառն հոտ մը քթիս չէր դար : Այս ալ մխիթարութիւն մ'էր :

Ամբողջ 3¹/₂ ժամ զուլաս մէյ մը աջ, մէյ մը ձախ, մէյ մը դէպ ի վեր, մէյ մը վար կը պտրտցնէի. շատ խզճալի վիճակ մը ունէի, եւ սոսկալի ճիւղեր կը թափէի տեսարանին վրայ գտնուող «արթիսթ»ները տեսնելու : Գիտէք ինչո՞ւ համար. կսմանց այդ «ժառաստան» ՂԸ-խարիները անպիս պատմէ՞նք քայսած էին ինձ եւ ինձ նման խեղճ էրիկ մարդոց առջեւ :

Ա. կարգ 10, Բ. կարգ 5 զը : Ինչո՞ւ համար գոնէ 20 հողիի համար «էքթուս» կարգ մը չկար 20 զրուշնոց, հայլայֆին վերապահեալ, զի տեսայ մի քանիներ որոնց զէմքէն բացորոշ կրեւէր թէ անհանդիսաւ էին 10նոցներուն հետ նստակնուն համար :

Վերջապէս մեկնեցանք գոն() սրտով եւ մեզ հետ տանելով երկար յորանջումներ :

ՊԵՏԻԿ

Չ Ո Ւ Ա Ր Ճ Ա Լ Ի Ք

Մեղրալուսնի վերագարծին, կղզիներու շոյկնաւին մէջ :

Տիկինը. — Ալ երկուքս ալ մէկ մարմին ենք այնպէս չէ, վասն զի լաւ կը յիշեմ որ քանձանան ըսաւ, «եւ եղիցին երկօքեան ի մարմին մի» :

Պարոնը (սրանեղած). — Այո՛, բայց պանդակապետը տարրեր կերպով մտածեց, վասն զի փոխանակ մէկ մարմնոյ, երկու մարմիններու համար հաշիւ պահանջեց :

Կանացի սրամարանութիւն :

Պարոնը. — Բայց ասիկն աւելի լաւ եւ ճափան չէր ըլլար որ օրական ձեզ պէտք եղած կաթը գնէիք զքան թէ կով մը պահէիք որ աւելի սուղի կը նստի :

Տիկինը. — Օ՛հ, սրովհետեւ սքանչելի մարդագետին մ'ունինք որ լաւ կերպով կը սնուցանէ մեք կովը :

Պ. — Բայց ինչո՞ւ համար այդ մարդագետինը վարձած էք :

Տ. — Որովհետեւ կով մը ունինք :

— Խնդրեմ ինձի 2 ոսկի փոխ տայիք :

* * *

- Բարիզէն վերադարձիս կուտամ :
- Բարիզ երթա՞նիդ չէի գիտեր կոր :
- Երթալիք ալ չունիմ :

Պրն. գլխուցաւ . — (որ ժամէ մը ի վեր իր վրայ կը խօսէր) Հոս եկամ ստենա գլխու սոսկալից ցաւ մը ունէի բայց հիմա անցաւ :

Բարեկամը . — Այո՛ , բայց ինձի անցաւ :

Մայրը . — Լեւոն հոս եկաւ . քոյրդ ինչո՞ւ ձեռք ցիր , չար տղայ :

Լեւոն . — Ինձի խաբեց անոր համար :

Մայրը . — Ինչպէս :

Լեւոն . — «Աղամ-Եւա» կը խաղայինք կոր , խնձորը ան առաւ որ ինձի փորձէ եւ... չփորձեց , խնձորն ալ ամենը մէկէն կերաւ :

* * *

Անցորդ մը . — Աստուծոյդ Բ. ին տունը ո՞րն է :
Փողոցին մէջ դարձիր , քիչ մը առաջ դնա , եւ որ տունին որ ականջիդ պոսալու ձայներ լսեա՞ դուք դարկի :

Երկու բժիշկներու մէջ :

Ա. — Ա՛հ , որչափ ուրախ եմ դքեդ տեսնելով , ա՛րտօրօ՞ իմացայ որ անցեալ օր օրէնաստիճան մը ըրեր էք :
Յաջողեցա՞ք :

Բ. — Աքանջելի կերպով , վերաբուժութեան մէջ ունեցած գործերէս ամենէն շահեկանը եւ...

Ա. — Հիւանդը ինչպէ՞ս է :

Բ. — Օ՛հ , մտաւ...

* * *

Լուսանկարչատան մը մէջ :

Լուսանկարիչը . — Պատկերնի՞դ , այնպէս չէ :

Յաճախորդը . — Այո՛ :

Լ. — Գուրսի՞ թէ ներսի՞ (Ռէժիսիօնիստ) :

Յաճախորդը . — Ի՛նչ օրերու հասանք :

Խ Ա Ձ

ԱԼ ՓԵՐԹԸՆԸ ԻԶԷՐԻ ԳԱԶ

(Շաբաթակալութիւն 13 քիւնէն)

Ինչպէս գիտէ ընթերցողը , ամսուայ մեր Ա. Գօզմին երեսին շուքը տեղն իրեն ձայնեղէ կաքը , եկաւ իր հիւրերուն քով եւ ներդրութիւն խնդրեց պէտք եղածին չափ զիրենք չի կարենալ մեծարելուն համար :

Մատմադէլէք , պու ազգամ էյի էյլէնէմէտինիդ , սողորուսը պուսուն իչիւն մահճուպուդ :

Օ՛նէ՞ լազրուր , գրգրուտաւ , փէք տէ կիւզէլ էյլէնիօրուդ :

Միւսիւ Միքէ , սէն պիր թարափա չէքիմիլին , մտածակա՞ն մը էտիօրուս :

Նէ կափայրմ մատմադէլ , սիդ պիր եսնուտ լա- գրուտալ տալմըշմըդ , պէն տէ պու եսնուտ գոնեադա :

Վույ Միքէ , պարիթ օլաւսն հէմէն , օյուն վագ- թի գոնեադ տէյի Ա. Յակոբաքի խննթլէրէ տէճոմիւշ իարին :

Գա ճանրմ Միւսիւ Գօզմին կէօրէմէյօրուդ , նէ- րէտէ :

Մատմադէլ , չօգ դալապալը վար տէյի սայկը էթմիւշ տէ պրապմըշ կիթմիւշ օլմալը :

Սանքի սյգըրը (եւթօլի) սինիլէ սօգանըր հալլէ- րի վար ըտր :

Ուի մատմադէլ , ուի , իլ եքի բուժուր եւթօլի նկարա :

Սան սուք , մատմադէլ , բէճա էտէրիմ , պու լա- գրուտալը գափայրն էյլէնէմիլէ պաղալըմ , գաղըն պիր գատրիլ տանա ետիալըմ , պիր ազ էվլէլ օյնատը- ղըմըզ գատրիլաէն պիր շէյ ադնաեամատըղըմըզ պիլիւ- սինիլ :

Փէք էյի օլուր ամա , դափալիէրլէր էքսիք ճա- սըլ օյնայալըմ , եօգա տէօրթ քիչիլիք պիր գարէ եա- փալըմ :

Չէնէր պիլ պիր եսնուտ կուրք կիպի օմուրա- ճալըզ , էօյլէ շէյ օլմըր մը :

Բարտօն մատմադէլ , եէտի քիչիլ իլէ օյնանըլ- մազ , ծոռն իչիւն տէօրթ քիչիլիք պիր դարէ ետիա- լըմ տէյօրում :

Պաթիլթ էօյլէ խննթ շէյ օլմալ , սէքիք քիչիլիք պիր դարէ թէրթիպ էտէլիմ , Գօզմինն եւրինէ պիլիմ Սերգիս աղբարը թային էտէրիլ , պարիմ շէնք շարճք պիր գատրիլ օյնաեալըմ :

Դիւպիլեկ , մատմադէլ :

Այս որոշման վրայ , ամսուայ Սերգիս աղբարը վեր կանչելով սրահին մէկ անկիւնը նստեցուցին ըսելով թէ տես մենք ինչպէս կը խաղանք նէ դուն ալ այնպէս պի- տի խաղաս , չորս հօդի (բրօվայի համար) սկսան դատրիլ խաղալ :

Սերգիս աղբար կէօրիլ յօ՞րմուսուն :

Անպիլէն Սերգիս աղբարը , ատամ պու տա պիր շէյ մի , հէչ , պուսուն տանիսդատըր օյնարբիս ամա պիր քիւլէս դօրէյիմ :

Եւ սկսան խաղալ , Որովհետեւ Սերգիս աղբարը քիչ մը սարիքատ էր քսան տարեկան տամա մը առէին :

էյ կիտի պու նէ՞ ուփազ թէֆէլս շէյ տիր . պու- նուն պիր դապաճանըր այըրըն տա ծուռ վէրին :

Ինչ որ է չերկնցնենք ուրիշ օրերի մը ամամ տալով գատրիլը սկսան :

Տիրիթէ ընող երիտատաղը պուաղ բարձի ձայնով :

Տըլիլիլեկ , Սերգիս աղբարը այս ձայնէն սարսա- փած :

Պէն նէ՞ տեղիլեկ , այ օլուր դատրիլ օյնա տէ- տինիլ , դալգտըմ օյնայաճաղըմ , էյեր պաչգա պիր շէյ տէմիլ իսէմ գափամա վուրուն :

Հայրը ճանրմ տէմիլին տէմէտօրուդ , (տըլիլիլեկ) տէտօրուդ :

Պուսու թիւրքէ տէօյլէտէնէ , բուճմատան պէն նէ՞ ադնարըմ :

Փէք էյի Սերգիս աղբար թիւրքէտինի տէ թէր- ճիւմէ էտէրիլ :

- Անախան գարնը :
- Պանա պախ , պէն էօյէ լախըրարյա ղէմէմ , Միւսիւ , աւանակ տէտին թընմատըխ , գարըրա՞ տա մը սապը էթմէլի :
- Ճանըմ Սերդիս աղբար , անավան գաթոր տէմէք , տէօրախնիւզատէ իլէրիյէ կիտին տիմէք տիր :
- Էյի եա , սօզըրուտան սօզըրու սէօյէսէ՞նէ :
- Մեղայ Յիսուսում , շիմտի տէ Սերդիս իլէ՞ն մի ուղըրաշմալը :
- Սերդիս աղբար , պիզ նասըլ եափըյօրսադ՝ տիզ-գաթ էթ քի եաղըլմահասըն :
- Փէք էյի ճանըմ , էօյէ էտէրիզ , պիզիմ մէմէ-քէթտէ պոււնտան էյիտինի օյնարբիս :
- Վույ պարիթ օլասըն հէմէն , Բասղալ պու կիճէ նէ գատար եիւրէք թիւքէտտին :
- Սէն սօնուհա պագ մատմաղէլ , նէ միւքէմմէլ օլաճագ գատրիլ :
- Փէք խենթ շէյ օլույօր :
- Բէվէրան , մատմաղէլ :
- Նորէն սկսան գատրիլը , մինչեւ շէն տը տամը թարգ-մանելէ յետոյ տիրիթէ ընողը սկսաւ :
- Թուր սը մեկ :
- Սարգիսը շիթթած կեցաւ :
- Ղարտաշ փէք թաթիլը եէրտէ սուրաուհուզ , պիր ազ տահա օյնարբիս :
- Ճանըմ Սերդիս , նէ՞յէ սուրաուհու , սանա քիմ սուր տէտի :
- Նէ պիլէյլիմ եա , սուր տէճումէ տէմէտին՞ն մի :
- Հայըր , ա գուզում թուր տը մէն տիմէք , էլինի զըզա վէր տէճն տէմէք տիր :
- Պու նէ՞ ագսիլիտան պէ՞ :
- Օնուհա տա գօլայը վար ուճտան ուճա թիւրքճէ սէօյէմէլի , ըսաւ սրիճե ընողը , եւ զրպանէն թուզթ մը հանելով գատրիլին առաջին բարթին շուս մը թարգ-մանելէ յետոյ՝ գառնալով գատրիլ խաղացողներուն :
- Ա.Ֆ էտէրսիսիզ Մատմաղէլէր վէ Միւսիւլէր եէ-նիտէն պաշլահաճաըզ :

(Շարունակելի)

ՆՈՐ ԷՍՆԱՖ ՄԸ

- Միւսիւ Պօղոսիկ հայր՞օլա , չանթա ըլան կէզիեօր-սուհուզ , թահսիլտարըլզա՞ մը պաշլատըն :
- Էվլէթ էֆէնտիմ :
 - Մաղազանըն իշի նասըլ թէսվիյիէ էթտին :
 - Եիւզատէ զըրզ ըլան պիթիրտիք իֆլաս իլամընը ալտըզ :
 - Քի՞մին մայէթինտէսինիզ շիմտի :
 - Էֆէնտիմ պիզիմքինին մայէթինտէ :
 - Սիզին քի քի՞մ օլույօր քի :
 - Պիզիմքի՞ :
 - Օ՞Ֆ , ճանըմ սիզինքի քի՞մ տիր թտնըյամայօրում :
 - Իշտէ պիզիմ մատամ :
 - Ճանըմ , ազնայամայօրում , մատամ քի՞մ տիր :

- Պիզիմ գարընըն եանընտա :
- Մատամըն թիւճճարըլզ մը եաբար նէ եաբար :
- Թիւճճարըն լաֆը՞ մը օլուր :
- Տօզըրու եօլտա թուալէթ մաղազասը աշտը պէն տէ եանընտա թահսիլտարըլզ էտիյօրում :
- Թուալէթ նէ՞ տիր եէնի էանա՞Ֆ մը չըզար :
- Էննաֆ տա լա՞Ֆ մը , Ալլահ պին պէրէքեաթ վէր-սին , պիզիմ չարչըտաքի թիւքեանճըլըզ նէ՞ օլաճագ :
- Տիմէք սէն իշի թըզըրընա գօյմուչուն :
- Նէ՞ եաբայըմ շիմտի տէվիր տէճմիւշ տիւր , բա-րայը ծնար գազանըյօր :
- Պիզիմ մատամըմըզ եօլսա նէ՞ եաբայըմ :
- Օնա դարըլմամ , սէն տէ պիր մատամ ալմանըն եօլունա պագ :

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Շաբաթ օր Մալիյէի պաշտօնատունէն 1000 ոսկ-ւոյ գումար մը յանձնուեցաւ Ազգ. Պապրիարքարանի : Կըսուի թէ մօտ օրէն Պետական նպաստամատոյց յանձ-նաժողովէն ալ 1000 ոսկի պիտի յանձնուի Ազգ. Պատ-րիարքարանի :

— Բարեկեցիկ Ռուսահայ մը , Պ. Գրիգոր Մեղվին-եան , որ Սեպտ. 14ին վախճանած է ի Տփղիս , 59,300 բուսլ կտակիր է զանազան բարեգործական նպատակնե-րու :

Խրիմի Թէրճէմանը ծանուցանելով Գրիգոր Մեղ-վինեանի կտակը , կըսէ թէ « Հայոց մէջ սովորութիւն ե-զած է այսպիսի կտակներ ընել . քիչ չաա նիւթական կա-րողութեան տէր մէկն , ազգ. կրթութեան , զպրօցի , մատենադարանի եւ ուրիշ այսպիսի նպատակներու հա-մար իր ունեցածէն մաս մը կ'հանէ , եւ ասիկայ օրինա-կելի ընթացք մ'է » :

— Խառն ժողովն չորեքշաբթի ի նիստ գումարեցաւ Ղալաթիոյ Խորհրդարանը , նախագահութեամբ Ս. Պատ-րիարք Հօր եւ ատենապետութեամբ Աւրանեան Ստեփան փաշայի : Ներկայ էին 6 անդամ Կրօն . Ժողովէն եւ 8 անդամ Քաղ . Ժողովէն : 1. Թէեւ օրակարգին մէջ բա-ւական խնդիրներ ունէր կարգադրելու , բայց զխառնա-պէս զբաղեցաւ մատուցանելի պաշտօնագրոց խմբագրու-թեամբ , որք պիտի ներկայացուին Խառն Ժողովոյ յա-ջորդ նստին , ստորագրուելու եւ մատուցուելու համար :

— Ազգ. Հիւանդանոցի Հոգաբարձութիւնը պասճա-ռաբանեալ հրաժարագիր մը մատուցած էր , որ խզճի մտօք նկատողութեան անուեցաւ թէ՛ եկեղեցական եւ թէ՛ աշխարհական անդամոց կողմէ : Այս առթիւ Ս. Պատրիարքը Ժողովին հաղորդեց մանրամասն ծանօթու-թիւններ այն պարագայից նկատմամբ զորս ինք անձամբ սեսած ու քննած էր : Կարծեաց փոխանակութեանէ մը յետոյ , հարկ տեսնուեցաւ Հոգաբարձութեան հրաժարա-կանն ընդունիլ , եւ յաջորդին ընտրութիւնը թողուեցաւ Քաղ. Ժողովոյ առաջիկայ նստին : Հարկ չկայ զրելու թէ մինչեւ որ նորը կազմուի , հին Հոգաբարձութիւնը պիտի

չարունակէ իր պաշտօնն եւ պատասխանատու պիտի մնայ Հիւանդանոցի եւ Ս. Յակոբայ հաստատութեան ընթացիկ գործառնութեանց :

— Նոյնպէս , չորս մայրապետները տեսնելով որ յետ կոչում չկայ շարաթիւթերի մը մէջ Հոգաբարձուներուն կամ Հիւանդանոցի պաշտօնեաներուն թելադրութեամբ իրենց դէմ գրուածներուն , ո՛չ ալ Հոգաբարձութեան կողմէ հաղորդուած պաշտօնական հերքում մը , ինչպէս Հոգաբարձութիւնը խոստացած էր Ս. Պատրիարքի երբ ԵՇ. ներկայացաւ ի Պատրիարքարան , ուստի , մայրապետներն հաւաքական խնդրագիր մը մատուցանելով նորէն , իրենց անձնական պատուոյն պաշտպանութիւնը կ'հայցէին : Զարժանը սնորհնել որոշուեցաւ :

— Կէտիկ-Փաշայի թաղեցուց կողմէ հանրագրութիւն մը մատուցուեցաւ , որով կ'ինչորեն որ նորընտիր թաղ. Խորհրդոյ կազմութիւնը վաւերացուի , եւ կ'յաւելուին . Վեթէ կատարուած ընտրական գործողութեանց մէջ ինչ ինչ օրինական զեղծմանց համար չվաւերացուի , գոնէ վերջ դնել առժամեայ թաղ. Խորհրդոյ պաշտօնավարութեան : Բազ. Ժողովոյ նկատառութեան յղուեցաւ :

— ԲՇ. Պուլիարական շոգենաւով Վառնայէ մայրաքաղաքս եկած երկու հարիւրի մօտ Հայերէ ոմանք ԴՇ. իրիկուն շոգենաւէն դուրս ելան եւ իրենց տեղերը գացին :

— Բարձրատիճան եկեղեցական մը Ամեն . Ս . Պատրիարք Հօր առաջարկած է Ազգ . Հիւանդանոցի տեսչութեան իրեն յանձնուիլը , պայմանաւ սակայն որ ինքք ուղղակի պատասխանատու ըլլայ Վարչութեան :

— Ս . Պատրիարքն Ազգ . Հիւանդանոցի հրամարիալ բոլոր հոգաբարձու անդամոց զատ զատ նամակներ ուղղելով , հաղորդեց թէ վերջնականապէս ընդունուած է իրենց հրամարականը Խառն Ժողովի վերջին նիստին մէջ , քուէից ստուար մեծամասնութեամբ , եւ յանձնարարեց որ մինչեւ նոր ընտրութիւն շարունակեն իրենց պաշտօնն ըստ սովորութեան :

Խ Ա Ռ Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

Լ . Հերոյճ կ'ըսէ թէ Կայս . հրամանագրի մը համաձայն յատուկ յանձնաժողով մը կազմուած է , որ անցեալ տարիներու ցաւալի գէպքերու պահուն Անատոլոյի մէջ քանդուած դպրոցներու , եկեղեցիներու եւ վանքերու վերաշինութեան նախնական ուսումնասիրութիւնները պիտի ընէ : Յանձնաժողովին պիտի նախապահէ զօրավար մը , եւ անդամները պիտի ըլլան վեց , երեքը Մանմետական պաշտօնեաներ ներքին եւ Կրթական նախարարութիւններու եւ Շէյխ Իւ Իսլամի Դրան , եւ երեքը քրիստոնեայ ներկայացուցիչներ Հայ Լուսաւորչական , Հայ Կաթողիկ եւ Յոյն Օրթոտոքս պատրիարքարաններուն :

Հաշտութիւն . — Կայս . Իրատէի մը համաձայն , արտաքին գործոց նախարար Թէվֆիկ փաշա , Հաշուակալութեանց Ատենին նախագահ Հասան Ֆէճմի փաշա ու արտաքին թղթակցութեանց քարտուղար Նուրի պէյ եւ

Հելլէն պատուիրակ իշխան Մալրոկորատագո ու Մ . Աղէֆանու չորեքշաբթի առաջին անգամ գումարեցան Խարիճիչի պաշտօնատան մէջ . Այս պատճառաւ Թէվֆիկ փաշա չկրցաւ ներկայ գտնուիլ Նախարարաց Խորհրդոյ չորեքշաբթի նի սին :

— Հաշտութեան ժողովն ամէն օր պիտի գումարի , Հաշտութիւն . — Օսմ . եւ հելլէն պատուիրակաց առջի օրուան գումարման մէջ կարգադրուեցաւ հաշտութեան դաշնագրոյն ծրագիրը , զոր Բ . Գուռը պատրաստած է նախաշաւիկ պայմանաց վրայ հիմնուելով :

— Հաշտութեան նախաշաւիկ պայմանաց մէջ նշանակեալ փոխառութեան , սահմանազկից զծման եւ Թեսալիայի զաղթականաց վերադարձի խնդիրներն յանձնաժողովներու յանձնուած ըլլալով , հաշտութեան վերջնական դաշնագրոյն թանակցութեանց պահուն այդ կէտերու վրայ պիտի չխօսուի :

— Օսմ . եւ հելլէն պատուիրակներն հինգշաբթի ալ գումարուեցան Խարիճիչի մէջ , նիսաը տեւեց ժամ 8էն 11 : Գումարումն երէկ ալ տեղի ունեցաւ :

— Իշխան Մալրոկորատագո Թէվֆիկ փաշայի յանձնեց Երկիրոս թագաւորին մէկ գիրն , որով հելլէն պատուիրակաց անուանումը կ'ձանուցանէ : Այս գիր մատուցուեցաւ Մեծ-Եպարքոսին :

— Թուրք լրագրաց մէջ երէկ առաւօտ հրատարակուած պաշտօնական զեկուցում մը՝ ծանուցանելով թէ Կրէտէի իսլամ կարօտելոց համար եղած հանգանակութիւնք հազիւ կ'ըսեն 70,000ի չափ խեղճերու ուսեստ (բրինձ , ալիւր եւ այլն) մատակարարելու , եւ յիշելով որ նուիրատուութիւնք հետզհետէ կ'նուզաին , զանոնք ձմրան սաստիկ ցուրտերէն պատաղարելու համար , կոչում կ'ընէ բարեւէրներու , որպէս զի վերմակ , զգեստեղէն եւ այլն եւ կամ անոնց փոխարժէքը զրկեն Կրետէի նպաստամատոց յանձնաժողովին :

Օսմ . զինուորք . — Սապահ , յիշելով եւրոպական լրագրաց ոմանց այն լուրեր թէ օսմ . զինուորք իրեւ թէ Թեսալիոյ գիւղերուն աւարի տուած ըլլան , հերքելու անգամ պէտք չի տեսներ , զրպարտութիւն եւ թշնամութեան արդիւնք նկատելով այդ սուտ լուրերը :

Թուրքիա եւ Պուլիարիա . — Իզտամ կ'հերքէ Տէյի Մէյլի այն լուր թէ օսմ . կառավարութեան եւ Պուլիարիոյ միջեւ յարարերութիւնք խիստ ձգտեալ ըլլան :

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Երիտասարդ մը պատրաստ է ուսուցանել խիստ դիւրուսոց մէթոտով Տաճկերէն , Անգղիարէն եւ Դազդիարէն լեզուները , կ'այցելէ մասնաւորաբար տուները նոյնպէս պաշտօն կ'ստանանէ դպրոցաց մէջ :

Դիմել «Մազիկ» խմբագրատունը :

ԿՈՐՈՒՍԵԱԼ ԿՏԱԿԸ

— Ճշմարիտ է, ըստ Օճան բոլորովին վնասած, արդեօք իմ տեղս դու երթաս չըլլա՞ր :

— Մեր երկուքին համար ալ, այսօր այն կողմերը երթալն անխոհեմութիւն է :

— Բայց եւ այնպէս քսան հազար Փրանքն ալ այնպէս գիւրին կերպով ձեռքէ հանելը տխուրութիւն է, իմ մասին, ես, չիտակը, ենթադրական վաճառքի առջև չը պիտի ընկրկիմ եւ կարծէ որ գէթ անգամ մը փորձենք :

— Ով ըսաւ քսան հազար Փրանքը հոն պիտի թողունք, առ առաւելն մէկ ժամէն, հազար Լուխներն զըրպանիդ մէջ համարէ :

— Հաւատս վկայ, զարմանալի մարդ ես. ստակներն պղնձու համար ինչ միջոց պիտի դործածես :

— Փոխանակ պանքայէն սասնալու, սեղանաւորիս զեղչել կուտանք :

— Ահ, ահ, միթէ սեղանաւոր ալ ունիս :

— Եւ խիստ մտերիմ սեղանաւոր մը որ հոգով մարմնով ինձ կապուած է. բայց սեղանաւորիս զրամատուէրը ներկայանալու համար հագուստներնիս փոխելու ենք, զն վճարէ պարտքերնիս եւ անմիջապէս երթանք :

Օճան սպասաւորը կանչելով պարտքը վճարելէ յետոյ, երկու սեղանաւորները մեկնեցան :

Կէսօրը մէկ ժամ անցած, այսինքն ցորեկուան ժամը վեցին, խիստ վայելուչ հագուած պարոն մը մտերմարար զրամատան երկրորդ անօրէնին գրասենեակը մը տաւ. տեսուչը այն նորեկը խիստ սիրալիւր կերպով ընդունեց եւ իր մօտը դանտուղ թխնաթուս մը ցոյց տուաւ որ նստի :

— Սրբելիդ իմ Պ. Կիրգա ըսաւ անօրէնը, ինչ բանի կը պարտիմ ձեր այս հազուադէպ այցելութիւնը :

— Կուզէի տեղեկութիւն անել թէ այսօր իմ ստորագրութեամբ քսան հազար Փրանքի չէք մը ներկայացած է արկղին :

— Սակէ զիւրին բան չիկայ, հիմայ կիմանանք ըսելով քովը պատին վրայ գտնուած ելեկարական մղակներէ միտն վրայ կրտեց, վայրկեան մը ետքը ազնիւ զէմքով երիասարդ մը ներս մտաւ :

— Պարոն Ալպէս ըսաւ անօրէնը նորեկին, այսօր Պ. Սուչօ Կիրգայի ստորագրութեամբ քսան հազար Փրանքի չէք մը վճարեցի՞ք :

— Չեմ կարծեր Պ. անօրէն, այսու հանդերձ, անգամ մը չէքէրու տոմարը աչքէ անցնեմ :

— Գնա նայէ եւ շուտ եկուր մեզ ալ խնայուր :

— Արկղակալը խոնարհելով դուրս ելաւ :

— Արդեօք ստորագրութիւնդ կեղծած են Պ. Կիրգա հարցուց անօրէնը փոքր ինչ անհանդիստ սրտով :

— Ամենեւին, տես զորոն ինչ է սրբելիդ իմ Պ. Տնօրէն, Եանեայէն բարեկամներէս մին իւր զաւակը Պօլիս զրկեց նամակաւ մը աղաչելով ինձ որ որբուսն վրայ հսկեմ, եկոյ տես որ տաք արիւն եւ անասնձելի երիտա-

սարդ մը լլլալով ինքզինքը զեղիս թեանց տուաւ, հիմայ ալ լսեցի որ նշանաւոր պչուհիի մը աղցեցութեան տակ է ինկեր անխնայ ստակ կը վաճենք թէպէտ եւ հայրը անհամեմատ հարուստ է, սակայն անշուշտ չուզեր որ զաւակս այսպէս հրապուրուելով զլլտէ երնէ, սուջի օրը եկաւ ինձնէ քսան հազար Փրանք ու վեց, ես ալ հանեցի քսան հազար Փրանքի չէք մը տուի. միաքա ինչ է զի՞տէ՞ք Պ. անօրէն :

— Իրաւ որ դեռ բան մը չեմ հասկնար :

— Կը տեսնէք որ ծպտեալ եմ :

— Ճշմարիտը երբ առաջին անգամ ներս մտաք շատ դժուարաւ զձեզ ճանչցայ, տէր վկայ քառսուէն տարեկան հազիւ կերեւիք :

— Մտածելի որ այսպէս ծպտելով, արկղակալին քով իւր զրագիր սպասեմ եւ երբ բարեկամիս որդին զալով բտակն առնէ ու մեկնի, ես ալ իրեն հետեւելով սիրուհոյն ուր բնակիլն իմանամ զի ապահով եմ որ ստակները ուղղակի անոր պիտի տանի :

— Արդեօք պատահմամբ դո՞ւք ալ սիրահարեցաք այդ Սիռէնին ըսաւ անօրէնը ծիծաղելով :

— Ես այնպէս կը յուսեմ որ այդ կիսը քանի մը հազար ոսկի տալով, բարեկամիս զաւակը ազատեմ :

— Տարօրինակ զաղափար, կը յուսաս որ ցոփուհին համոզուի :

— Պիտի առաջարկեմ որ անմիջապէս մեկնի Պօլիսէն, առ այս կը թողարկէք որ արկղակալին քովը իւր զրագիր սպասեմ, մինչեւ որ ստակն առնելու գայ մեր շուտիկը կի՞թէ մինչեւ հիմայ չէ առած :

— Մեծ հաճութեամբ, անաւասիկ Ալպէսն ալ եկաւ :

— Ինչ լուր :

— Տէր իմ գեռ այսպիսի չէք մը ներկայացուած չէ արկղը :

— Լաւ, Պ. Սուչօ Կիրգան հեղք պիտի գայ, ինչ որ հրամայէ կատարէ :

Արկղակալը խոնարհեցաւ եւ երկու ոտք ետ դնաց որ Սուչօ Կիրգայի ճամբայ տայ առաջ անցնելու :

Պ. Կիրգա անօրէնին իւր շնորհակալութիւնը յայտնելէ յետոյ արկղակալին հետ զրամատան արկղը ընդարձակ սրահն իջաւ, եւ կապտազոյն սպակիներով ակնոց մը դնելով, գրագրի մը քով նստելով Օճանին զալտեան սպասեց :

Այժմ պահ մը Պ. Կիրգան թողլով, ընթերցողնիս Արոն Նէսիմի զրամատուէն առաջնորդենք :

Ղալաթիոյ Բիւրէքճիէր փողոցին մէջ Երջաղ խանը որ հին քարուկիր շէնք մ'էր, եւ որ յետոյ ի նորոյ կառուցուելով այժմ Զիյվէր-պէյ խան անունը ստած է, ահա այդ նախկին Երջաղ խանի վարի յարկը գտնուած չորս սենեակները, Արոն Նէսիմի գործատեղին էր, միեւնոյ մութ եւ խոնաւ սենեակները հազարակցութեան անցքերով միացած էին իրարու, մի զրամարկղի յատկացուած էր որուն կիցը կը գտնուէր Պ. Արոն Նէսիմի գրասենեակը :

(Շարունակելի)

Տեղ Լրագրոյս Ա. ՍՍ.ԲՍ.ՅԵԱՆ
ՏՍՍ.ԳՐԱՌԹԻՒՆ ՍԱՐԵԱՆ
(Նախկին ՊՍՂՏՍՆՍՆՆ. Տարբան)
Կ. Պոլիս, Սուլթան Համադ 14.